ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ ՀՀ ԿԳՄՄՆ «Նաիրիի արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ի «Տրանսպորտային միջոցների շահագործում և նորոգում», (1.0 դրույք), «Գյուղացիական (ֆերմերային) տնտեսության կազմակերպում» (1.0 դրույք), մասնագիտությունների գծով արտադրական ուսուցման վարպետների, ինչպես նաև «Ֆիզիկա» (տարեկան 186 դասաժամ), Հանրահաշիվ» և «Երկրաչափություն» (տարեկան 637 դասաժամ) առարկաների ուսուցչի թափուր տեղեր:

Արտադրական ուսուցման վարպետների և ուսուցիչների վարձատրությունը որոշվում է՝ ըստ հաստիքացուցակի, տարիֆիկացիոն ցուցակի և դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է բանավոր հարցազրույցի միջոցով՝ ըստ ուսումնարանի կողմից կազմված բանավոր առաջադրանքներից, որոնք առնչվում են դասավանդվելիք առարկային (մոդուլին) և մանկավարժական գործունեությանը:

Մրցույթին կարող է մասնակցել այն անձը ով համապատասխանում է՝

1) հանրակրթական առարկաների դասավանդման դեպքում՝ «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին,

2) մասնագիտական առարկաների դեպքում՝ տվյալ մասնագիտության պետական կրթական չափորոշչով սահմանված պահանջներին:

Մրցույթին մասնակցելու համար անձը ներկայացնում է հետևյալ փաստաթղթերը՝

1) Դիմում
2) Կրթության մասին հավաստող փաստաթուղթ (դիպլոմ) բնօրինակը
3) Անձնագիր (բնօրինակը և պատճենը)
4) Աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք (առկայության դեպքում)
5) Ինքնակենսագրություն (Ձև 4)
6) Մեկ լուսանկար 3×4 չափի
7) Այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ – ում աշխատելու իրավունքը հաստատող փաստաթուղթ:
8) ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ (բնօրինակը և պատճեն):
9) Հրապարակված հոդվածների ցանկ կամ գիտական աստիճան կոչումը հաստատող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից սկսած, 22.01.2026թ.-ից մինչև 05.01.2026թ (ներառյալ) ամեն օր ժամը 10^{00}-ից 16^{00}-ը բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից՝

Մրցույթը տեղի կունենա 2026թ. **փետրվարի 10-ին,** արտադրական ուսուցման վարպետի համար ժամը 11^{00}-ին, իսկ ուսուցչի համար ժամը 13^{00}-ին:

Նաիրիի արհեստագործական պետական ուսումնարանում. հասցեն՝ ք. Եղվարդ, Երևանյան 10:

Տեղեկությունների համար զանգահարել՝ 093 26 91 26, 094 83 45 04, 077 56 39 52:

ՏՆՕՐԵՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ Կ. ՄԵՀՐԱԲՅԱՆ